# Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի 2008թ. կոռուպցիայի ընկալման համաթիվը Տարածաշրջանի վերաբերյալ հիմնական տվյալներ՝ Հարավարեւելյան Եվրոպա եւ Կենտրոնական Ասիա

Թրանսփարենսի Ինթերնեշնլ-ի (ԹԻ) կոռուպցիայի ընկալման 2008թ. համաթիվը (ԿԸՀ) հստակորեն մատնանշում է, որ Հարավարեւելյան Եվրոպայում եւ ետխորհրդային երկրներում կոռուպցիան մնում է որպես լուրջ հիմնախնդիր: Բոլոր 20 երկրներն էլ (7 Հարավարեւելյան եւ 13 ետխորհրդային) գրանցել են 5-ից ցածր արժեք (0-ից 10-ը միավորանոց սանդղակով), ինչը ցույց է տալիս, որ այդ պետությունների մեծ մասում դրսեւորվել է կոռուպցիայի ընկալման բարձր մակարդակ:

Չնայած լայնածավալ բարեփոխումների անցկացմանն ու Եվրամիությանն անդամակցության նախապատրաստման գործընթացից բխող խթաններին՝ Խորվաթիայում, Մակեդոնիայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում ու Բոսնիա-Հերցեգովինայում դեռեւս զգալի առաջընթաց չի նկատվել կոռուպցիայի դեմ պայքարում: Տարածաշրջանի՝ Եվրամիության անդամակցությանը հավակնող գործնականում ոչ մի երկրում, բացառությամբ Թուրքիայի եւ Ալբանիայի, կոռուպցիայի դեմ պայքարը նշանակալի հաջողությամբ չի պսակվել, թեպետ այդ ուղղությամբ ձեռք առնված միջոցներին եւ պետության ղեկավարների խոստումներին, այն է՝ կոռուպցիայի դեմ պայքարը դարձնել բարեփոխումների առանցք:

Հարավարեւելյան Եվրոպայում ներկայումս կոռուպցիայի ընկալման ցածր մակարդակով աչքի ընկած եւ նախնական տարբերություն գրանցած միակ երկու երկրներից մեկը ԵՄ անդամակցության հնարավոր թեկնածու Ալբանիան է, մյուսը՝ ԵՄ թեկնածու Թուրքիան: Այդուհանդերձ, Եվրամիությանն անդամակցության գործընթացը դեռեւս չի կարող դիտվել որպես հակակոռուպցիոն պայքարի հուսալի միջոց:

Ետխորհրդային բոլոր երկրների թվում միայն Վրաստանում է նկատվել որոշակի առաջընթաց, մինչդեռ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միավորները շարունակում են նվազել: Ադրբեջանի արժեքները 2007-ի համեմատ 2008-ին նվազել է 0.2-ով: Կենտրոնական Ասիայի երկրների մեծ մասը մնացել է նույն ցածր մակարդակում կամ զգալի ետընթաց է ապրել, ինչպես օրինակ Ղրղզստանը, որը 2007թ. ԿԸՀ 2.1 արժեքի փոխարեն 2008-ին գրանցել է 1.8 արժեք:

| Երկրի դիրքը | Երկրի դիրքը տարածաշրջանում | Երկիր/տարածք | 2008թ. ԿԸՀ արժեքը | Վստահելիություն միջակայք | Հարցում-ների քանակը |
|---|---|---|---|---|---|
| 58 | 1 | Թուրքիա | **4.6** | 4.1 - 5.1 | 7 |
| 62 | 2 | Խորվաթիա | **4.4** | 4.0 - 4.8 | 8 |
| 67 | 3 | Վրաստան | **3.9** | 3.2 - 4.6 | 7 |
| 72 | 4 | Մակեդոնիա (ՆՀՀ) | **3.6** | 2.9 - 4.3 | 6 |
| 85 | 5 | Ալբանիա | **3.4** | 3.3 - 3.4 | 5 |
| 85 | 5 | Մոնտենեգրո | **3.4** | 2.5 - 4.0 | 5 |
| 85 | 5 | Սերբիա | **3.4** | 3.0 - 4.0 | 6 |
| 92 | 8 | Բոսնիա- Հերցեգովինա | **3.2** | 2.9 - 3.5 | 7 |
| 102 | 9 | Մոնղոլիա | **3.0** | 2.6 - 3.3 | 7 |
| 109 | 10 | Հայաստան | **2.9** | 2.6 - 3.1 | 7 |
| 109 | 10 | Մոլդովա | **2.9** | 2.4 - 3.7 | 7 |
| 134 | 12 | Ուկրաինա | **2.5** | 2.2 - 2.8 | 8 |
| 145 | 13 | Ղազախստան | **2.2** | 1.8 - 2.7 | 6 |
| 147 | 14 | Ռուսաստան | **2.1** | 1.9 - 2.5 | 8 |
| 151 | 15 | Բելառուս | **2.0** | 1.6 - 2.5 | 5 |
| 151 | 15 | Տաջիկստան | **2.0** | 1.7 - 2.3 | 8 |
| 158 | 17 | Ադրբեջան | **1,9** | 1.7 - 2.1 | 8 |
| 166 | 18 | Թուրքմենստան | **1.8** | 1.5 - 2.2 | 5 |
| 166 | 18 | Ղրղզստան | **1.8** | 1.7 - 1.9 | 7 |
| 166 | 18 | Ուզբեկստան | **1.8** | 1.5 - 2.2 | 8 |